# ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿԻ ՀԱՏՈՒԿ ԱՌԱՋԱՐԿ «ՆՈՐ ՏՈՒՆ» ԲՆԱԿԵԼԻ ՀԱՄԱԼԻՐԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

HSBC Բանկ Հայաստանը Ձեզ է ներկայացնում Նոր Նորք վարչական շրջանում գտնվող «Նոր տուն» բազմաբնակարան համալիրում բնակարանի ձեռք բերման հիփոթեքային վարկի հատուկ առաջարկ:

## Բնակելի համալիրի մասին

Բնակելի համալիրը գտնվում է Երևանի ամենաբարձր կետում՝ Նոր Նորքի 5-րդ զանգվածում, Միկոյան 9/3 փողոցում՝ Սուրբ Սարգիս եկեղեցու հարևանությամբ: Համալիրը հագեցած է հետևյալ հարմարություններով.

- 1400 քմ կանաչապատ տարածք,
- խաղահրապարակներ,
- մարզահրապարակներ,
- հանգստի գոտիներ,
- թենիսի կորտ,
- տեսարան դեպքի Արարատի և Արագածի գագաթները գրեթե բոլոր բնակարաններից,
- մարզահամալիր,
- փակ և բաց լողավազաններ:

**Բնակարանները շահագործման են հանձնվելու.**

- ներքին պատերը բաժանված,
- հատակը հարթեցված և պատուհանները տեղադրված,
- էլեկտրականության, ջրամատակարարման և ջրահեռացման հանգույցների առկայությամբ,
- գազաֆիկացումը՝ անհատական օգտագործման եղանակով, բաժանարար կետը տեղադրված յուրաքանչյուր հարկում:

## Վարկավորման հիմնական պայմաններ

| | |
|---|---|
| **Արժույթ** | ՀՀ դրամ |
| **Տարեկան անվանական տոկոսադրույք** | 12.5% |
| **Տարեկան փաստացի տոկոսադրույք** | 13.48% - 16.12% |
| **Վարկի գումար**[1] | 5 մլն - 200 մլն ՀՀ դրամ |
| **Վարկի ժամկետ**[2] | 24 - 240 ամիս |
| **Վարկ/գրավ հարաբերակցություն**[3] | Գույքի արժեքի մինչև 90% |
| **Կանխավճար** | Սկսած 10%-ից |
| **Վարկի տրամադրման միանվագ վճար** | Վարկի գումարի 0.5%, առավելագույնը՝ 200.000 ՀՀ դրամ |
| **Վաղաժամկետ մարման տուգանք** | **Չի կիրառվում** |
| **Վարկի սպասարկման վճար** | **Չի կիրառվում** |

ՀՀ դրամով վարկերի համար անվանական տոկոսադրույքը հաշվարկվում է Բանկի՝ ՀՀ դրամով մանրածախ հաշվարկային տոկոսադրույքին գումարելով հաստատուն մարժա և տվյալ պահին կազմում է՝

9% + 3.5% = **12.5%,**

որտեղ՝

**9%**-ը Բանկի՝ ՀՀ դրամով մանրածախ հաշվարկային տոկոսադրույքն է,
**3.5%**-ը՝ Բանկի հաստատուն մարժան:

## ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

**Վարկի անվանական տոկոսադրույքը լողացող է և կարող է փոփոխվել մանրածախ հաշվարկային տոկոսադրույքի (ՄՀՏ) փոփոխության դեպքում:**

**Վարկի տոկոսագումարները հաշվարկվում են տարեկան անվանական տոկոսադրույքի հիման վրա: Տարեկան փաստացի տոկոսադրույքը ցույց է տալիս, թե որքան կարժենա վարկը Ձեզ համար տոկոսագումարները և վարկի տրամադրման և սպասարկման գծով բոլոր պարտադիր վճարները սահմանված ժամկետներում և չափերով կատարելու դեպքում:**

ՀՀ դրամով հիփոթեքային վարկի տրամադրման և սպասարկման ընդհանուր պայմաններին և կարևոր այլ բացահայտումներին կարող եք ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ https://www.hsbc.am/pdfs/mortgages/residential-property-purchase-loan-amd/:

Գործող պայմանների վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվություն ստանալու նպատակով կարող եք այցելել նաև Բանկի ցանկացած մասնաճյուղ կամ զանգահարել +374 60 655 000 հեռախոսահամարով:

---

[1] Վարկի գումարի չափը կախված է նաև Բանկի կողմից սահմանված՝ վարկառուի ունեցած վարկերի գծով մարումների և եկամտի հարաբերակցությունից:
[2] **Վարկառուի նվազագույն տարիքը պետք է լինի 18 տարեկան: Վարկառուի տարիքի և վարկի ժամկետի հանրագումարը չի կարող գերազանցել 65 տարին:**
[3] Կախված է տարբեր գործոններից, այդ թվում՝ գույքի գտնվելու վայրից (Երևանում/Երևանից դուրս), անշարժ գույքի ձեռքբերման վարկի դեպքում՝ նաև լրացուցիչ գրավի առկայությունից (գույք, գնման իրավունք և դրամական միջոցներ) և այլն: